հրաման իսկ գրէ=զկնի ԺԸ ամի ի լեզու Հռովմայեցի և յԱնտիոք քաղաքի . . . իսկ . . . »։

Այս տեղ կայ երեք էջ գրուած, զոր ամենուն ծանօթ լինելուն չեմ օրինակած։ Սորա վերջն կայ։

«Եւ զերկնարացիկ բանալիս զՍ. Աւետարանս յիշատակ բարի հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց հաւրն»։

«Արդ գրեցաւ Ս. աւետարանս ի թուին ՌԾ. յերկիրն Տարօնոյ, ի գիւղն Բազու, ընդ հովանեաւ Ս. Միածնին, և Ս. Կարապետին Մշոյ, ձեռամբ անարժան և անարհեստ գրչի Կարապետ երիցու, որ յետոյ հետևեցաւ գրոց»։

«Աղաչեմ զքեզ, ով դասք քահանայից, որք հանդիպիք Ս. աւետարանիս տեսութեան կամ օրինակութեամբ յիշեսջիք յաղաւթս ձեր հեզահոգի—Այլ մեղօք լցեալ Փիլիպոսիս, որ զխորաններն և զթփերն սակաւ դեղօք լցի, անմեղագիր լերուք և որ բոլոր սրտով ողորմի Աստուած ասէ, ամենայն վերոյգրեալ ի սմա նա ողորմածն Աստուած ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս ողորմի յիւր միւսանգամ գալստեան ամէն»։

«Հայր մեր որ յերկինս . . . »։

Նաև Ամատ գիւղը մի այլ կարմիր աւետարան տեսայ Ռ՚ՃԻԲ. ին գրուած, սա յիշատակարան չունէր։

Պատահած եմ շատ մի ձեռագիր աւետարաններու, որոց մէկն ևս ի Բագրևանդ չէր գրուած. այս աւետարաններն ևս մի փաստ են որ Բագրևանդ բնիկ ժողովուրդ չէ մնացած, այլ որ տեղից որ եկած են, բերած են իւրեանց աւետարաններն իւրեանց հետ։

Ամատ մի մեծ և հնաշէն տուն տեսայ, որ ըստ վկայութեան և կալուածական գրոց հաստատմամբ մօտ 200 տարուան տուն է [1]։

Այս տունը կը պատկանի Գանտիլեան ցեղին, որ երկրին մէջ մի միայն զայս տեսած եմ բնիկ և հարուստ, որք

1. Հին կալուածական եւն. թղթերն հետաքրքրական են։